

**ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի (գրադուռի) անվանումը</b>	<b>Ավտոմեքենաների նորոգման փականագործ</b>
<b>Դերը</b>	Ավտոմեքենաների նորոգման փականագործը առաջադրանքին համապատասխան նախապատրաստում է աշխատատեղը, զննում է ավտոմեքենան, բացահայտում անսարքությունը, որոշում վերանորոգման աշխատանքների հաջորդականությունը, ընտրում է համապատասխան փականագործական գործիքները և հարմարանքները, կատարում ավտոմեքենայի վերանորոգում, ապահովում է աշխատատեղի մաքրությունը:
<b>Խնդիրների բնագավառ 1. Աշխատատեղի նախապատրաստում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատատեղի մաքրում,</li> <li>2. Փականագործական գործիքների դասավորում և նախապատրաստում,</li> <li>3. Աշխատատեղի էլեկտրամատակարարման և սեղմված օդի մատակարարման միացումը,</li> </ol>
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատատեղը և շրջակա տարածքը մաքրված է փոշուց, մետաղի խարտուրքներից, յուղի հետքերից:</li> <li>2. Փականագործական գործիքները և հարմարանքները դասավորված են աշխատանքային սեղանին և նախապատրաստված աշխատանքի համար:</li> <li>3. Աշխատատեղը միացված է էլեկտրամատակարարման և սեղմված օդի մատակարարման արտաքին ցանցին:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 2. Ավտոմեքենայի զննում, անսարքության բացահայտում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ցուցաբերի ավտոմեքենայի տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության կարողություններ</li> <li>2. Ցուցաբերի ավտոմեքենայի զննման և տեղ գտած անսարքությունների բացահայտման կարողություն</li> <li>3. Սահմանի ավտոմեքենայի վերանորոգման հաջորդականությունը</li> </ol>
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ճիշտ է հասկացել ավտոմեքենայի տեխնիկական փաստաթղթերը</li> <li>2. Ավտոմեքենայի զննումը և անսարքությունների բացահայտումը կատարված են ճիշտ</li> <li>3. Ավտոմեքենայի վերանորոգման հաջորդականությունը որոշված է ճիշտ:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 3. Ավտոմեքենայի վերանորոգման նախապատրաստում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Մաքրում և լվանում է ավտոմեքենայի վերանորոգման ենթակա մասերը,</li> <li>2. Ընտրում է համապատասխան փականագործական գործիքներ,</li> <li>3. Կատարում է ավտոմեքենայի նախնական քանդում և վերանորոգման ենթակա մասի բացում,</li> </ol>
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վերանորոգման ենթակա մասը մաքրված և լվացված է,</li> <li>2. Փականագործական գործիքները ընտրված են,</li> <li>3. Վերանորոգման ենթակա մասը նախնական քանդված է, հեռացված են հանգույցը այլ մեքենամասերի և ագրեգատների հետ կապող օղակները,</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 4. Կատարել ավտոմեքենայի վերանորոգման աշխատանք</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վնասված հանգույցի հանումը ավտոմեքենայի վրայից,</li> <li>2. Վնասված հանգույցի քանդում, անսարքության վերացում,</li> <li>3. Վերանորոգման հետ կապված փականագործական աշխատանքների կատարում</li> <li>4. Վնասված հանգույցի, կամ հանգույցի առանձին դետալների փոխարինում,</li> <li>5. Վնասված(վերանորոգված) հանգույցի հավաքում,</li> <li>6. Վնասված(վերանորոգված) հանգույցի աշխատանքի ստուգում և վերանորոգման շտկում ըստ անհրաժեշտության</li> <li>7. Հանգույցի տեղակայում ավտոմեքենայի վրա,</li> </ol>

	8. Ավտոմեքենայի հավաքում տեխնիկական պահանջներին համապատասխան
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վնասված հանգույցը հանված է ավտոմեքենայի վրայից,</li> <li>2. Վնասված հանգույցը քանդված է, անսարքությունը վերացված,</li> <li>3. Փականագործական աշխատանքները կատարված են ճիշտ,</li> <li>4. Վնասված հանգույցը, կամ հանգույցի առանձին դետալները փոխարինված են,</li> <li>5. Վնասված(վերանորոգված) հանգույցը հավաքված է,</li> <li>6. Վնասված(վերանորոգված) հանգույցի աշխատանքը ստուգված է, հնարավոր անսարքությունները վերացված</li> <li>7. Հանգույցը տեղակայված է ավտոմեքենայի վրա,</li> <li>8. Ավտոմեքենան հավաքված է տեխնիկական պահանջներին համապատասխան</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 5. Կատարել ավտոմեքենայի գործարկում և փորձարկում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հավաքված ավտոմեքենայի փորձարկում</li> <li>2. Հավաքման և վերանորոգման անճշտությունների վերացում</li> <li>3. Ավտոմեքենայի վերջնական հավաքում և փորձարկում ճանապարհային պայմաններում,</li> </ol>
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հավաքված ավտոմեքենան փորձարկված է</li> <li>2. Հավաքման և վերանորոգման անճշտությունները բացահայտված են և վերացված</li> <li>3. Ավտոմեքենան վերջնական հավաքված է և փորձարկված ճանապարհային պայմաններում,</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 6. Աշխատատեղի սպասարկում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Մաքրել աշխատատեղը և նրա շրջակա տարածքը մետաղական խարտուքից, աղբից, փոշուց և յուղի հետքերից,</li> <li>2. Փականագործական գործիքները, հարմարանքները տեղակայել համապատասխան դարակներում,</li> <li>3. Անջատել հաստոցը էլեկտրամատակարարման և սեղմած օդի մատակարարման արտաքին ցանցերից,</li> </ol>
<b>Կատարման չափանիշները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հաստոցը և նրա շրջակա տարածքը մաքրված են մետաղական խարտուքից, աղբից, փոշուց և յուղի հետքերից,</li> <li>2. Փականագործական գործիքները, հարմարանքները տեղակայված են համապատասխան դարակներում,</li> <li>3. Հաստոցը անջատված է արտաքին էլեկտրամատակարարման և սեղմած օդի մատակարարման ցանցերից,</li> </ol>

ՀԱՎԵԼՎԱԾ 2

**ԱՐԶԵՍՏԱՎՈՐԻ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Արհեստավորի «Ավտոմեքենաների նորոգման փականագործ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. Տեսական գիտելիքների ստուգումը, որի ընթացքում նախատեսում է կրթական չափորոշիչով նախատեսված «ՄՈՂՈՒԼ 6. Թույլտվածքներ և նստեցվածքներ, չափիչ գործիքներ և չափումների տեխնիկա», «ՄՈՂՈՒԼ 7. Նյութագիտության հիմունքներ», «Մոդուլ 8. Ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքը», «ՄՈՂՈՒԼ 9. Ավտոմոբիլի էլեկտրական սարքավորումներ» մոդուլների տեսական հարցերից բաղկացած համալիր թեստային առաջադրանքի հանձնումը սովորողի կողմից: Նշված չորս մոդուլները թեստային առաջադրանքի մեջ ներկայացվում են հավասար հարցերով:

2. Մասնագիտական կարողությունների ստուգում, որի ընթացքում սովորողին հանձնարարվում է կատարել ավտոմեքենայի որոշակի հանգույցի վերանորոգում: Վերանորոգման ժամանակ սովորողին տրամադրվում են բազմապիսի փականագործական և չափող գործիքներ, հարմարանքներ, ավտոմեքենայի տեխնիկական պահանջների բնութագիր:

Սովորողը պետք է կատարի հանձնարարված վերանորոգման աշխատանքը, կատարելով հետևյալ գործողությունները.

- զննել ավտոմեքենան և բացահայտել անսարքությունը,
- ընտրել վերանորոգման հաջորդականությունը
- ընտրել փականագործական գործիքները
- քանդել ավտոմեքենայի համապատասխան հանգույցը
- վերանորոգել վնասված մասը փոխարինելով մեքենամասը կամ վերականգնելով վնասված դետալը,
- հավաքել հանգույցը և ավտոմեքենան,
- փորձարկել ավտոմեքենան և ըստ անհրաժեշտության կատարել վերանորոգման շտկումներ

Տեսական գիտելիքների բավարարման նվազագույն պահանջ է հանդիսանում հանձնարարված թեսթային հարցաշարի ոչ պակաս քան 60% հարցերի ճիշտ պատասխանը:

Մասնագիտական կարողությունների բավարարման համար նվազագույն պահանջ է՝ հանդիսանում ավտոմեքենայի ճիշտ և արագ վերանորոգումը: Վերանորոգման ժամանակը սահմանվում է ելնելով վերանորոգման աշխատանքների բարդության աստիճանից, հիմք ընդունելով 3-րդ կարգի ավտոմեքենայի վերանորոգման փականագործի համար սահմանված աշխատանքների կատարման նորմատիվային ժամանակները: